ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԾԱՂԿՈՒՄԸ

Յա. ԶԱՐՈՒԲՅԱՆ

Հայաստանի ԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար

Մայիսյան այս ծաղկող օրերին հայ ժողովուրդը, մեր բազմազգ սոցիալիստական Հայրենիքի եղբայրական բոլոր ժողովուրդների հետ միասին, հանդիսավորությամբ տոնում է Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման պանծալի 40-ամյա տարեդարձը։

Գտնվելով երկու մայրցամաքների՝ Եվրոպայի և Ասիայի սահմանագծում, առևտրական և ռազմական կարևոր ճանապարհների խաչմերուկում Հայաստանը ենթարկվել է օտարերկրյա զավթիչների բազմաթիվ ավերիչ արշավանքների, զավթիչներ, որոնց դեմ հայ ժողովուրդը անձնազոհ ու անվեհեր պայքար է մղել։

Հայ ժողովրդի պատմության ամենափայլուն էջերից մեկը Հայաստանի միացումն էր Ռուսաստանին XIX դարի սկզբում։ Այդ իրադարձությունը հսկայական առաջադիմական դեր է խաղացել մեր ժողովրդի կյանքում, նրան հաղորդակից է դարձրել ցարիզմի և բուրժուազիայի դեմ ռուս ժողովրդի մղած ազատագրական պայքարին։

XX դարի սկզբում Հայաստանի աշխատավորները ռուս ռևոլյուցիոն պրոլետարիատի հետ ուս-ուսի տված ոտքի ելան և իրենց ազատագրումը կապեցին Ռուսաստանում պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի հետ։ Հայաստանում երևան եկան բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպություններ։ Նրանց ողջ գործունեությունը հիմնված է եղել պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների վրա, Ռուսաստանի, Վրաստանի, Ադրբեջանի բոլշևիկների ռևոլյուցիոն գործունեության հետ անխզելի կապի վրա։

1920 թվականի ամռանը, ՌԿ(բ)Պ ԿԿ Կովկասյան բյուրոյի անմիջական ղեկավարությամբ, ընդհատակյա բոլշևիկյան կոմիտեների և բջիջների բազայի վրա կազմավորվեց Հայաստանի Կոմունիստական պարտիան։

Հայաստանի Կոմպարտիան՝ Սովետական Միության Կոմունիստական մեծ պարտիայի հավատարիմ ու մարտական ջոկատներից մեկը, ղեկավարում էր Հայաստանի աշխատավորության ողջ պայքարը բուրժուա-նացիոնալիստական դաշնակցական ռեժիմի տապալման և Սովետական իշխանության հաստատման համար։

1920 թվականի նոյեմբերի 29-ին այդ պայքարը հաջողությամբ պսակվեց։ Հայաստանի ապստամբած բանվորներն ու գյուղացիները Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ, ստանալով ռուս մեծ ժողովրդի անշահախնդիր ու եղբայրական օգնությունը, իրենց երկրից ընդմիշտ վտարեցին ատելի դաշ-

նակներին՝ արևմտյան իմպերիալիստների դրածոներին, և հաստատեցին Սովետական իշխանություն։

Ազատագրված հայ ժողովուրդը, Հայաստանը հռչակելով Սովետական Սոցիալիստական ռեսպուբլիկա, երախտագիտության առաջին խոսքն ուղղեց իր մեծ բարեկամ, համայն աշխարհի աշխատավորության առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինին։ Վլադիմիր Իլյիչը Հայաստանի աշխատավորներին ջերմորեն ողջունեց Սովետական իշխանության հաղթանակի առթիվ։

Քառասուն տարին պատմականորեն մեծ ժամկետ չէ, բայց այդ ժամանակաշրջանում Սովետական Հայաստանը, մեծ Սովետական Միության եղբայրական ժողովուրդների համերաշխ ու համախմբված ընտանիքում, հսկայական թռիչք գործեց և ցարական Ռուսաստանի նախկին աղքատ ու հետամնաց ծայրամասից կերպարանափոխվեց բարձր զարգացած արդյունաբերություն, կոլեկտիվացված ու մեքենայացված գյուղատնտեսություն, առաջավոր մշակույթ ու գիտություն ունեցող ծաղկող ռեսպուբլիկայի։

Ռեսպուբլիկայի աշխատավորները խորապես գիտակցում են, որ կյանքի բոլոր բնագավառներում ձեռք բերված սքանչելի հաջողությունները հնարավոր դարձան շնորհիվ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի, շնորհիվ պարտիայի լենինյան ազգային իմաստուն քաղաքականության, եղբայրական բարեկամության, բոլոր ժողովուրդների և ամենից առաջ ռուս մեծ ժողովրդի անշահախնդիր օգնության։

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի XV սեսիայում ունեցած իր ելույթում ընկեր Ն. Ս. Խրուշչովը միանգամայն արդարացիորեն ասաց. «Մենք հպարտանում ենք, որ Ռուսաստանի նախկին ծայրամասերի փուռնով ապացուցված է, որ Արևելքի երկրները լիակատար հնարավորություն ունեն մի սերնդի կյանքի ընթացքում վերջ տալ հետամնացությանը, աղքատությանը, հիվանդություններին, տգիտությանը և բարձրանալ ու հասնել տնտեսապես առաջավոր երկրների մակարդակին»։

Որպեսզի ակնառու կերպով պատկերացվի, թե ինչպիսի իսկական պատմական հաջողությունների են հասել Սովետական Հայաստանի աշխատավորները, բավական է ասել, որ 1960 թվականին արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալը համարյա 70 անգամ գերազանցել է 1913 թվականի մակարդակը։

Արդյունաբերության հին ճյուղը՝ լեռնահանքայինը, այժմ հանդիսանում է գունավոր մետալուրգիայի բարձր զարգացում ունեցող բազա։ Ստեղծվել և արագ զարգանում են այնպիսի կարևոր ճյուղեր, ինչպիսիք են՝ քիմիականը, էլեկտրատեխնիկականը, մեքենաշինականը, սարքաշինականը, ռադիոտեխնիկականը և այլն։

Ռեսպուբլիկայում ստեղծված է էներգետիկ հզոր բազա։ Բավական հետաքրքրական է նշել, որ բնակչության մեկ շնչին հասնող էլեկտրական էներգիայի արտադրությամբ Սովետական Հայաստանը գերազանցել է կապիտալիստական այնպիսի երկրների, ինչպիսիք են Ֆրանսիան, Իտալիան ու Ճապոնիան։

Նույնպիսի արագությամբ են զարգանում մեզ մոտ հաստոցաշինությունն ու գործիքաշինությունը։ 1961 թվականին ռեսպուբլիկայի արդյունաբերությունը կարտադրի չորս անգամ ավելի շատ մետաղահատ հաստոցներ, քան արտադրվել է ցարական Ռուսաստանում 1913 թվականի ընթացքում։

Սովետական Հայաստանի արդյունաբերության տեխնիկական բարձր մակարդակի մասին է խոսում այն փաստը, որ ներկայումս ռեսպուբլիկայի ձեռնարկություններում արտադրված մեքենաներն ու սարքավորումները արտահանվում են աշխարհի 37 երկրներ։

Ռեսպուբլիկայի քառասունամյակին հիանալի նվեր հանդիսացավ 1960 թվականին եղբայրական Ադրբեջանից ստացված բնական գազը։ Կարճ ժամկետում կառուցված Վարդաշեն-Երևան գազամուղը Անդրկովկասյան ռեսպուբլիկաների աշխատավորների կողմից իրավամբ անվանվել է «բարեկամության գազամուղ»։

Սովետական Հայաստանի աշխատավորները սքանչելի արդյունքների են հասել էկոնոմիկայի, գիտության ու կուլտուրայի զարգացման բնագավառում, բայց է՛լ ավելի բերկրալի են մեր մոտակա հեռանկարները։ Արդյունաբերական արտադրանքի ծավալը 12 տոկոս աճի տարեկան միջին տեմպերի դեպքում յոթնամյակի ընթացքում կավելանա 2,3 անգամ։

Սովետական Հայաստանը լուրջ հաջողությունների հասավ նաև սոցիալիստական գյուղատնտեսության վերելքի գործում։ Այժմ ռեսպուբլիկայի 663 կոլխոզներում և 116 սովխոզներում աշխատում են յոթ հազար տրակտորներ (15 ձիուժանոց 1200-ից ավելի հացահատիկային կոմբայններ, հազարավոր ավտոմեքենաներ։ Ոռոգվող հողերի տարածությունը 1913 թվականի 97 հազար հեկտարից 1960 թվականին հասցված է մինչև 240 հազար հեկտարի։

1960 թվականին 1953 թվականի համեմատությամբ մսի արտադրությունն ավելացել է 70 տոկոսով, կաթինը՝ 69,8 տոկոսով, բրդինը՝ 55 տոկոսով։ Գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար Հայկական ՍՍՌ-ն 1958 թվականին պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Երկրի գյուղատնտեսության հետագա զարգացման գործում պատմական նշանակություն ունի ՍՄԿՊ ԿԿ Հունվարյան պլենումը։ ԿԿ պլենումում նշված գյուղատնտեսության ղեկավարման մեջ տեղ գտած թերությունները ամբողջապես և լիովին վերաբերվում են նաև մեր ռեսպուբլիկային։ Անդրկովկասյան ռեսպուբլիկաների գյուղատնտեսության առաջավորների խորհրդակցությունը, որին մասնակցում էր ընկեր Ն. Ս. Խրուշչովը, հսկայական գործնական օգնություն ցույց տվեց մեզ ՍՄԿՊ ԿԿ Հունվարյան պլենումի կողմից առաջադրված խնդիրների իրագործման հարցում։

Սովետական իշխանության քառասուն տարիների ընթացքում հայ ժողովուրդը հսկայական հաջողությունների հասավ կուլտուրական շինարարության և աշխատավորության նյութական բարեկեցության բարձրացման բնագավառում։ Անճանաչելիորեն փոխվել է Սովետական Հայաստանի քաղաքների ու գյուղերի դեմքը։ Լայնորեն ծավալվել է բնակարանային շինարարությունը։ Ռեսպուբլիկան ծածկված է դպրոցների և տեխնիկումների խիտ ցանցով։ Մինչև ռևոլյուցիան դպրոցներում սովորում էր ընդամենը 35 հազար աշակերտ։ Այժմ ռեսպուբլիկայի 1219 դպրոցներում սովորում է մոտավորապես 320 հազար երեխա։ Համեմատության համար կարելի է ասել, որ բնակչության յուրաքանչյուր տասը հազարին ընկնում է Սովետական Հայաստանում՝ 1 717, Թուրքիայում՝ 926, Իրանում՝ 548 սովորող։ Մինչև Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն։ Ներկայումս ռեսպուբլիկայի տասը բուհերում սովորում են 22 հազարից ավելի ուսանողներ, 38 տեխնիկումներում՝ մոտ 15 հազար սովորողներ։

Ռեսպուբլիկայի կյանքում մեծ երևույթ հանդիսացավ 1943 թվականին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ստեղծումը, որը դարձավ դիտական մտքի խոշոր կենտրոն։ Գիտությունների ակադեմիայի 30 ինստիտուտներում և 49 այլ գիտա-հետազոտական հիմնարկներում բեղմնավոր աշխատանք են տանում 4300-ից ավելի գիտական աշխատողներ, այդ թվում գիտությունների 164 դոկտորներ և 1502 թեկնածուներ։ Սովետական Հայաստանի գիտնականները ակտիվորեն օգնում են զարգացնելու ռեսպուբլիկայի էկոնոմիկան ու կուլտուրան և իրենց ստեղծագործական աշխատանքով արժեքավոր ավանդ են մուծում սովետական գիտության՝ աշխարհի ամենաառաջավոր գիտության ընդհանուր գանձարանը։

Տարեցտարի բարելավվում է ռեսպուբլիկայի բնակչության բժշկական սպասարկումը։ Հիվանդանոցների, պոլիկլինիկաների և բուժարանների լայն ցանցը կոչված է պաշտպանելու աշխատավորների առողջությունը։ Այժմ մեզ մոտ յուրաքանչյուր 10 հազար մարդուն ընկնում է 23,7 բժիշկ։ Դա համարյա երկու անգամ շատ է, քան ԱՄՆ-ում և Անգլիայում, 8 անգամ շատ, քան Թուրքիայում և 14 անգամ շատ, քան Իրանում։

Սովետական իշխանության տարիներին աճեց գրողների և արվեստի աշխատողների մի սքանչելի համաստեղություն։

Մեր կյանքի յուրաքանչյուր օրը աշխարհին ցուցադրում է սոցիալիստական սիստեմի անժխտելի գերազանցությունը կապիտալիստական սիստեմի հանդեպ։ Ծիծաղաշարժ են թվում ՍՍՌՄ ազգերի անհավասարության մասին պնդող բուրժուական ռեակցիոն գործիչների շաղակրատանքները։

Սովետական Հայաստանի, ինչպես և մեր Հայրենիքի եղբայրական մյուս ռեսպուբլիկաների օրինակով մի անգամ ևս կարելի է համոզվել բուրժուական պրոպագանդայի կեղծության մեջ։ Ծաղկող սովետական ռեսպուբլիկայի և հարևան կապիտալիստական երկրների միջև անհամեմատելի տարբերություն կա։ Արաքսի ձախ ափը, որտեղ աշխատում և կառուցում է իրոք ազատ հայ ժողովուրդը, ողողված է լույսերի ծովով՝ իսկ հակառակ ափին մութ է ու խավար։ Դա երկու աշխարհների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի սահմանն է, լույս ու խավարի սահմանը։

Եվ պատահական չէ, որ հայ ժողովրդի լայն զանգվածները, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արտաքսվել էին հարազատ օջախներից, ձգտում են վերարնակվել իրենց իսկական հայրենիքում՝ ազատ Սովետական Հայաստանում։ Հետպատերազմյան տարիներին ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Հունաստանից, Իրանից և այլ երկրներից մեզ մոտ ներգաղթել են ավելի քան հարյուր հազար հայեր։

Սովետական Հայաստանի աշխատավորները, ստեղծագործական ուժերով լցված, վստահ իրենց էլ ավելի երջանիկ վաղվան և սերտ համախմբված Կոմունիստական պարտիայի ու նրա լենինյան Կենտրոնական Կոմիտեի շուրջը, որը գլխավորում է Լենինի անմահ գործի հավատարիմ շարունակող ընկեր Ն. Ս. Խրուշչովը, մեծ Սովետական Միության ժողովուրդների միասնական եղբայրական ընտանիքում է՛լ ավելի մեծ եռանդով կաշխատեն, որպեսզի արժանավայել դիմավորեն պարտիայի պատմական XXII համագումարը, հանուն սոցիալիստական Հայրենիքի հզորության հետագա ամրապնդման և մեր երկրում կոմունիզմի հաղթանակի։